37. ՁՈԲԱՆ ԹԱԳԱՎՈՐ

Կէղնի, չէղնի չոբանըմ կէղնի։ Տարին տըսվերկու ամիս կաշխատի, էրկու յախեն մեկ չէղնի։ Էն մեկ օր լե ինկ ուրեն կասե. «Հար հ՚ե՞ր ես հրմլա զիմ հոգին հանիմ ու կուշտ չուտիմ. պիտի հ՚ընկնեմ սարեր, էրթամ իմ արևուն արև էնիմ»։

Կթորկե զուր օչխըրներ, զճամբախ կիտա հ՚առեջ ու կէրթա։

Կէրթա ըխթիյար հայու մը հ՚ռաստ կիգա։ Ըխթիյար կհարցու էդ մարդուց.— Զորան, հ՚ու՞ր կէրթաս։

— Հ՚ու՞ր կէրթամ, էդա քանելանց տարի հովվութեն կէնիմ, իմ էրկու յախեն մեկ չէղնի, հ՚ընկեր իմ սարեր, բալքիմ աստված ընծիկ ըռսխըմ իտա։

Հալվորն կասե.— Զորան, մադամ օր հ՚ընկեր իս սարեր քու ըռսխի հ՚ետև կօլըրտիս, քզիկ մեկ թանբիհ մը կէնիմ, զիմ խոսք չկոտրիս։

Զոբանը կասե.—Թըղ էղնի։

Հալվորն կասե.— Զոբա՛ն, կէրթաս հար հ՚ուր օր արև քու վրեն պատավ, ծով կէղնի, ցամաք կէղնի, սար կէղնի, ձոր կէղնի, հ՚ոնի կնստիս մնաս, տեխ չըս էրթա։

Զոբանն ասեց.— Թըղ էղնի։

Բարևմնաց էղան հ՚իրարուց։ Զորան գնաց ուր ճամբու հետ, հալվոր լե՝ ուր ճամբու հետ։

Զոբանն է, գնաց հասավ քոշքի մը տակ, արև ուր վրեն թռավ, զմնչք տվեց էդ քոշքի պատին ու յան էկավ, նստավ։

Էդ քոշք Խամուր-բեկի քոշք կէղնի։ Խամուր-բեկին խորոտիկ ախ-

չիկըմ կէղնի, հար որն օր կուզէ՝ չի տա, կառնե կփախնե կիգա էդ սարու զլուխ, ուրեն քոշքըմ կշինե ու կմնա։

Էդ ախչիկ կտեսնա օր, որն օր էկավ ուրեն հ՝ուզընկան, հեր բակ-լանմիշ չէղավ, չտվեց։ Կէլնի գողտուտիկ Զոլ-փաշի տղին խոսք կիտա։ Կասե.— Գիշերով հեծի զքու ձին, էկո մըր բաղնի տակ օլըրտի, ես փանջարեն կնստիմ կիշքիմ, կելնիմ կիդամ բանամ զդուռ, կառնեք զի-րար ու կէրթանք։

Էդ Զոլ-փաշի տղեն է, կհեծնի զուր ձին, կիգա Խամուր-բեկի քոշքի բաղնի տակ, օր օլըրտի, ախչիկ հ՝ելնի դուրս, առնե էրթա։

Զորան անկաճ կդնե գետին, կտեսնա, օր ձիու մը օտաց ձեն կիգա, բանձրանց հեղըմ կքխքա։

Օր կքխքա, Զոլ-փաշի տղեն ինք ուր մտաց մեջ կասե. «Զէղնի՞ էդ-տեխ մարդ կեր սլահվըտուկ, հ՝ելավ զիս կբռնեհ»։ Սիրտ կխըլըփա, կփրցնի ձիուց, կընկնի ցած ու ուշք կընցնի։

Օր կփրցնի կընկնի ձիուց ցած, ուշք կընցնի, չորան կտեսնա։ Կէլնի հուշիկըմ կհեծնի զձին, ախչիկ կտեսնա, օր ձիավորըմ ուրանց քոշքի դուռ կանավ։ Կէլնի առնե զուր շաթ ու փոթեր, կհ՝իշնի կիգա, կբանա զդուռ, կէլնի դուրս։ Օր կբանա զդուռ, կէլնի դուրս, չորան կվեր-ցու զախչիկ, կթալե թարկին ու զձիու գլուխ կդառցու։

Շատ կէրթան, քիչ կէրթան, կլուսնա։ Ախչիկ կիշքե տեսնա օր էդա Զոլ-փաշի տղեն չէ։ Կասե.— Զաստված օր կսիրես, քենե բանըմ կհար-ցում, ղողոբդն ասե, հրմին-հրմին բերեր ես զիս, ես քումն իմ, դու իմն իս, դու ո՞րն իս։

Կասե.—Ես ո՞ր պիտի էղնեմ, ես հովիվըմ ենք, սարեր կօլըրտենք, ինչ խըդար հովվութեն էրի, իմ էրկու յախեն մեկ չէղավ։ Հ՝ելա, հովվու-թեն թարկ էրի, հ՝ընկա սար ու ձոր, հ՝ռաստ էկա հալվորու մը։ Հալվորն ասեց. «Զորա՜ն, քզիկ բանըմ կասեմ, զիմ խոսք բռնես, զարար չըս քաշի, ասեց. հար հ՝ուր օր կէրթաս, գետ կէղնի, ծով կէղնի, սար կէղնի, ձոր կէղնի, հ՝ուր օր արև քու վրեն պատավ, հ՝ոնի կնստես»։ Էկա ձըր քոշ-քի տակ, արև վըր ընծիկ պատավ, յան տվի պատի տակ ու նստա։ Մեկ լե տեսնամ, կես գիշեր էղավ, ձիավորըմ էկավ, օր էկավ, ես քխքացի, ձիավոր վախեցավ, հ՝ընկավ ձիուց ցած, ուշք հ՝ընցավ, ես թռա հ՝ելա, հեծա զձին, դու հ՝իշար էկար, բացիր զդուռ, առա իմ թարկին ու էկա։

Էկան մոտեցան քաղքի մը։ Ախչիկն ասեց չորանին.— Առ քզիկ լըփրմ օսկի, գնա էդա քաղքի մեջ, որն օր աղեկ խանն է, կհարցուս, հ՝օղե մը քրիս, քրի վրեն խոսք-խաբար չէղնի էնիս, կառնես խըսիլ, կարպետ, կփռիս, ձեռքըմ լե յաթաղ բազար կէնիս, օր պառկինք մեջ, ես կբռնիմ զձիու գլուխ, կկանիմ հ՝ոգա, կիգաս կառնիս զիս, կէրթանք։

Զոբան է, հ՝իշավ ձիուց, ձին տվեց ախչկա ձեռկ, ինք զարկեց էկավ քաղաք։ Հարցուց, փորձեց՝ էդա քաղքի մեջ խան ի՞նչ տեխն է, գնաց բազար էրեց, հ՝օդե մը՝ քրեց, մշակըմ լե խզմաթ էնե, առավ խալի-խալիչա, զհ՝օդեն աղեկըմ փռեց, թորկեց էկավ, առավ զախչիկն ու էկավ։

Հ՝իրկուն օր էղավ, պառկելու վախտ, ախչիկ էձգեց զուրանց տեխ, ասեց.— Զոբան, արի պառկինք։

Զոբանն ասեց.— Ես չըմ հ՝իգա, ես հ՝ոդա, դռան հ՝ետև կպառկիմ։

Ինչ էրեց ախչիկ, անկարելի էղավ, թե ասեց.—Զոբան, մելի մըլի, քանի օր աստված զմըր ճակտի գիր հըմլա է գրի, բիլմզութեն մ՝էնի, էկո հանե զքու հալավ, պառկի։

Զոբան նա էրեր էր, հո չէրեց։

Զհալվըներ լե չհանեց, քաշեց զուր կուլապ ուր գլուխ, հանեց զչարխըներ, դրեց գլխու տակ, զօտներ զարկեց դռան դեմ, զգլուխ դրեց պատի տակ ու պառկավ, քնավ։

Թե շաբաթըմ, թե էրկու, մանցին էդտեխ։ Զորնի օյոյեկ էդ էղավ, ինչ գիտի՝ գործեց ախչիկ, չէկավ ուր խեչ չպառկավ։

Ավուր մեկըմ լե էգ քաղքի փաշի տղեն հ՝ելավ օլըրտավ, էկավ էդ խանի մեջ զէդ կնիկ տեսավ։ Ասեց.— Էդա կնիկ վի՞րն է։

Ասին.— Զոբանին։

Օր ասին չոբանին, խելք գնաց, ուշք հ՝ընցավ, հ՝ընկավ գետին.— Ես էդնիմ փաշի մը տղա, չորնի կնիկ զիմ կնիկ խորոտիկ էղնի՞, ես լե հ՝որի՞ն սաղ կմնամ։

Ուշք օր էկավ, հ՝ինկ, հ՝ելավ գնաց հոր, ասեց.— Ֆլան խանի մեջ չոբանըմ էկեր է, հ՝իշի։ Խորոտիկ կնիկըմ կա ուրեն, էդա հ՝իգամ, էդա էրթամ, զորով լե էղնի, կճամբիս, զէնղոր կնիկ կքաշիս, կառնիս հ՝իգաս ընծիկ։

Փաշենն ասեց.— Լաո, զորով չէղնի, բալքիմ աստված էնդոր հըմալ է խըսմաթ էրի, քում լե հըմալ է էրի։

Փաշի տղեն զէրկու օտկ դրեր էր մեկ սոլ՝ չըմ ճանչնա, քի չըմ ճանչնա։

Փաշենն ասեց.— Լաո, մադամ օր հըմալ է, էդի զորով չէղնի, չէղավ՝ խաբինք ղչոբան, ճամբինք էրթա տեխըմ, բալքիմ էլ չգա, առնեք զկնիկ, իտանք քզիկ։

Հ՝ու՞ր ճամբինք, հ՝ու՞ր չճամբինք. մեկըմ էնդիեն մաճլիսը մեջեն թռավ ասեց.— Փաշա, ճամբե թըղ էրթա, ֆլան գետի հետ տարին հեղըմ փունջըմ վարդ կիգա, ինչ խըտար հիվանդ, օր մեռել լե էղնի, հեղըմ հոտ առնե, կսաղնա, կէլնի կանի. բըլե էն գետ չըսիբե, մարդ չիշխնա մտնի ջրի մեջ, օր մտնի՝ կխեղդվի։ Էրթա բերե, չկառնա բերե, կնիկ կմնա հ՝երսի վրեն, կէրթանք կուղինք, բերենք քու տղին։

Փաշենն ասեց.— Վալայի, էդի աղեկ է, մեկըմ թըղ էրթա, կանչե զչոբան, բերե։

Մեկըմ գնաց, ասեց.—Չոբան, քելե էրթանք, զքզիկ փաշեն կկանչե։

Հովվի կնիկն ասեց.— Դուք գացեք, ես կճամբիմ, կիգա։

Փաշի մարդիկն գացին։

Ախչիկ ճամբեց զբաղնեպանն առավ էկավ, հանեց ձեռկըմ թագավորական հալավ, տվեց բաղնեպընին, ասեց.— Չչոբան կառնիս, կէրթաս բաղնեկ, աղեկըմ համամլամիշ կէնիս, զէդա թագավորական հալվըներ կհագուս ուրեն, կառնիս կիգաս, զուր հալվըներ լե կբողչիս, կճամբիս կիգա։

Բաղնեպան առավ զչոբան, գնաց։ Աղեկըմ համամլամիշ էրեց, զթագավորական հալվըներ հագուց, բողչեց զհովվի հալվըներ, զարկեց հ'անթե տակ առավ էկավ, ախչկան թասլիմ էրեց ու գնաց։

Օր թասլիմ էրեց գնաց, ախչիկն վերուց ասեց.— Մարդ, տես, ինչ օր քզիկ թանբիհ կէնիմ, իմ խոսքից չէլնիս։

Հովիվն ասեց.— Հ'որի՞ պիտի հ'ելնեմ։

Ասեց.— Կէրթաս փաշի դիվան, ներս .օր կմտնիս, թամանա կէնիս, կկանիս դռան հ'ետե, քզիկ կասին՝ արի վերին դին նստի, չէղնի էրթաս, թամանա կէղնիս, կնստիս հ'ըմնու տակ։ Խահվա կբերեն, չէղնի փչիս, խմիս, կդնիս գետին, քիչըմ պաղի, կվերցուս խմիս։ Քզիկ ինչ օր կասեն, ջուհապ չիտաս, բան օր կասիս՝ տեսնամ, ես լե կաշխատիմ։

Չոբանն հ'ելավ գնաց, տեսավ օր խարախոլ կանուկ է վըր դռան։ Ասեց.— Չիս փաշեն կանչի։

Խարախոլ գնաց ներս, շուհար տվեց, փաշեն ասեց.—Թըղ հ'իդա։

Չոբան օր ներս մտավ, թամանա էրեց, կանավ մեկդին, փաշեն տեսավ, շիվարավ մնաց, ինքն ուրեն ասեց. «Ջանըմ, չոբան օր էդա էղնի, փաշեն իմա՞լ կէղնի, էդի հ'իսնե փաշա է, ես իմա՞լ ասեմ՝ արի գնա ֆլան տեխ, վարդ բիա։

— Չոբան,— ասեց փաշեն,— արի հ'ոդա նստի։

Չէ՞ կնիկ սովրցուցեր էր, թամանա էրեց, հ'ընցավ հ'ըմնու տակ նստավ։

Խահվա բերին, դրեց պաղավ, ստրա խմեց։

Օր խմեց խըլըսավ, փաշեն վերուց ասեց.— Չոբան ախբեր, գինա՞ս զքզիկ հ'որին իմ կանչի։

Չոբանն ասեց.— Ես ի՞նչ գինամ։

Ասեց.— Լսեր իմ, դու վախտով հովվութեն շատ իս էրի, զծազկըներ գըմեն կճանչնաս, մրգիկ հիվանդըմ կա, կասեն՝ ֆլան գետի հետ տարին հեղրմ փունջրմ վարդ կիգա, ինչ հիվանդ օր հոտ առնե, հա ու հա է, էր-

թաս զէդ վարդ ժողվիս, բերես, մըր հիվանդ հոտ առնե, հ՚ելնի կանի։ Ասեց,—Օր չբերեր իս, զքու գլուխ կզարկիմ։

Զօրան թամա էղավ, հ՚ելավ էկավ ախչկա մոտ, կփընչփընչա.— Ես հ՚ու՞ր, էդա խաներ քաքնել հ՚ու՞ր, տուր իմ կուլապ ու չարխըներ, ես կէրթամ։

— Մարդ, հ՚ու՞ր կէրթաս, ի՞նչ է էղի։

— Էլ ի՞նչ էղնի, փաշեն դրեր է վըր ընծիկ՝ կէրթաս ֆլան ջետի հետ, վարդ կիգա, կժողվիս, կառնիս կիգաս։

— Մարդ, էդա օր ցերեկով հ՚ու՞ր կէրթաս, քաղքեն դուրս հ՚ելնելու պես դինան օր կփախնիս, կռնին, կառնին կէրթան, զքու գլուխ կզարկին։ Հըմեն-հըմեն մանցեր իս՝ մանցի, գիշեր հ՚ելի փախի գնա։

Զօրան բան չասեց, ախչիկ աղեկըմ ֆքրավ չօբանի վրեն, օր զթագավորական հալավ հագեր էր, բեմուրատ չէ, ինք լե խորոտիկ էր, զոզան էր առի զուր թալըրխ, ասեց. «Ջանամու գոռ օր, զՁոլ-փաշի տղեն կորցուցի, չօբան վըր էնդոր դեղյակի մարդըմ է»։

Հ՚իրկուն էղավ, ասեց՝ բալքիմ խելացվորվեր է չօբան, էձգեց զտեխ, ասեց.— Արի գրկվինք հ՚իբար, պառկինք։

Զօրան ասեց.— Չէ, չէղնի, քի չէղնի։

Հ՚ելավ հանեց զուր թագավորական հալվըներ. ծալեց, գրեց մեկ դին, հագավ զուր չօրնի հալվըներ, առավ զկուլապ վրեն ու էկավ շան պես, օթռավ դռան հ՚ետև մեկ լե ուր հ՚ավալկու տեխ։

Չէ՞ գիշեր շատ մտածեց. իմա՞լ կէղնի օր էդա փաշի ձեռքեն ազատիմ։ Հ՚ընկավ մարախի մեջ, հարլուս քնավ, մեկ լե զաչքեր բացեց, տեսավ լուս է։

— Ախչի,— ասեց,— դու խոսկ տվիր, օր ղիս կես գիշեր արթնըցուցեր, հելնեք փախնեք էրթենք, հ՚որի՞ չզարթցուցիր, էլ իմա՞լ հ՚ելնեմ էդա ցերեկով փախնեմ էրթամ։

Ախչիկն ասեց.— Տնավեր, հ՚ու՞ր կփախնիս, էրթաս, հ՚ելի քզիկ խելք կսովրցում, գնա առ ու էկո։

Հ՚ելավ հագավ զուր հալվըներ, առավ զկուլապ վըր փեճերուն, զճոկան էձգեց թենըվեր, ասեց.—Դը ասե տեսնամ, ի՛նչ կասիս։

— Ի՞նչ կասեմ, կէլնիս բռնես զգետ, կէրթաս. կէրթաս կէլնիս մեշի մը մեջ, հ՚ուստեն օր գետ կիգա, կփրցուս չաթալ սըրըխըմ, կառնիս քու ձեռք, կնստիս էն շըռբեսներու մեջ, կիշքիս։ Մեկ լե կտեսնաս օր վարդ էնդիեն էկավ, զչաթալ կիտաս դեմ, շըռփեսներու միջով կժողվիս քու հ՚առեջ, զէդա թուլլի փեշկիր լե կիտամ, կտզկիս, զվարդ կդնիս մեջ, օր չթոռմի, կառնիս կիգաս։

Հովիվն է, հ՝ելավ ու հ՝ընկավ ճամբախ, բռնեց զգետի պռուկ ու բանձրցավ, գնաց հասավ ախչկա ասած տեխ, մտավ մեշի մեջ, չաթալ սըրըխըմ փրցուց ու էկավ նստավ գետի պռուկ շրուփեսներու մեջ։

Մեկ լե տեսավ ջրի հ՝երես կաբմրավ ու էկավ, զսըրըխ տվեց վարդերու դեմ, ուժդան չաթլով քոմեց ու առավ էկավ։ Բերեց ուր հ՝առեջ ժողվեց, հանեց զփեճկիր, թոշեց, զվարդեր լցեց մեջ, օր չթոռմեր, հ՝ելավ առավ ու էկավ։ Բերեց տվեց ախչկան։

Փաշի խըլայուղներ տեսան օր չոբան էկավ, գացին փաշին ասին.— Վալայի, չոբան էկավ։

Փաշեն ասեց.— Ջանըմ, իմա՞լ կէղնի էդ մարդ զվարդ լե բերեց, իմա՞լ էնեք զէդ մարդ կորցունք։

Ասեց.— Գացեք կանչեք, հեղըմ զվարդ թըղ բերե, սորա կմտածենք։

Գացին ասին՝ զքզիկ թագավոր* կկանչե։

Ախչիկն ասեց.—Դուք գացեք, էրկու սըհաթեն սորա կճամբեմ, կիգա։

Խըլայուղներ օր գացին, ախչիկն հանեց ձեռքըմ ուրիշ թավուր հ՝ելավ, հադուց շորնին, ճամբեց բաղնեկ։

Չոբան ասեց.— Ջանըմ, ընծիկ պետկ չէ, զիմ հալվըներ տուր հագնեմ։

Ախչիկն ասեց.— Տնավեր, հ՝երկ է ծռութեն էնիս, խոմ էդ լե սարեր չէ կօլըրտիս, օր չըս հագնի, դու էղեր իս քաղքցի, մարդամեջ կմտնիս, սմոթ չէ՞, էրթաս էդա հալվընեռով հ՝ելնիս փաշի դիվան։

Ճամբեց աղեկըմ համամլամիջ էրեց, թրաշ էղավ, դառցավ էկավ։

Ախչիկ նստուկ էր փանջարեն, կիշքեր։ Տեսավ, լերդ կպատռեր, չոբան կքաքներ ուր մեռելին, խեչ լե չիգեր պառկեր։

Էկավ տուն, ախչիկ լցեց զվարդ մըջ փեճկըրին, տվեց չոբնի մոտ։

Ասեց.— Կառնիս կէրթաս, կտանես փեճկիր վարդ կդնիս թագավորի հ՝առեջ, թամանգար կէղնիս ու կկանիս։ Թագավոր կասե՝ հրամեցեք, նստեք, թամանդար կէղնիս ու կէրթաս հ՝ըմնու ցած կնստիս։ Կասին՝ արի վերին դին, չէրթաս։ Խահվա կբերին, չէղնի փչիս ու խմիս, կդնիս գետին, քիչըմ կհովշըկի, կվերցուս, կխմիս, կէլնիս թամանդար կէղնիս, կիգաս։

Չոբան հ՝ելավ առավ զվարդն ու դեմ քշեց փաշի դիվան։ Թամանդար էղավ, տարավ զվարդ, դրեց փաշի հ՝առեջ ու էկավ, դռան հ՝ետև կանավ։

Փաշեն տեսավ զէդոր հալավ, հ՝ընցած ավուր հալավ հ՝ուր, հ՝եռ ավուր հ՝ուր։ Ասեց. «Էդա լե իմ պես փաշե մ՝ է, էդոր կորա լե էդոր կնիկն է, ես իմա՞լ ասեմ էդ մարդուն՝ գնա զֆլան բան բի»։

---

* Բնագրում չոբան, ուղղված է ըստ իմաստի (Ե. Կ.)։

Ասին՝ արի վի նստի չորնին։ Զորան թամանդար էղավ ու գնաց ուր հ՝ավալկու տեխ նստավ։ Խահվա բերին, խմեց զուր խահվեն, քիչըմ նստավ, հ՝ելավ թամանդար էղավ ու գնաց։

Թագավորի տղեն քանի մ՝ օր մնաց, մեկ լե հ՝ելավ գնաց էդ իսան •լըրտավ։ Զորանի կնիկ աչք առավ, խելք գնաց գլխեն, ուշքաթափ էղավ, հ՝ընկավ գետին։

Էկան փաշին ասին.— Ըպա չասիս, քու տղեն մեկ լե գացեր է էն խան, տեսեր է զչորնի կնիկ, խելք գացեր է, ուշքաթափ էղեր է, հ՝ընկի դետին։

Ասեց.— Գացեք առեք ու էկեք։

Էկան առան գացին։ Տղեն մեկ լե վերուց ասեց.—Էդ կնիկ օր չբերեք, ասալաթան ես թասլիմ կէնիմ։

Փաշեն կանչեց զուր մաճլիսներ.—Ի՞նչ էնեք, ի՞նչ չէնեք։

Մաճլիսներուց մեկ մարդ վերուց ասեց.— Փաշա, դու զէդ վարդն իս տեսի, ըպա զէդ վարդի տեր տեսնա՞ս, իմալ կէղնիս։

Փաշենն ասեց.— Իմա՞լ, էդ վարդին տեր լե կա՞։

Էդ մարդ վերուց ասեց.— Իմալ, էդ վարդ առանց տե՞ր է։

Ասեց.— Գացեք, կանչեք զչորան, թըղ հ՝իգա։

Գացին զչորան կանչին, ասին.— Զքզիկ փաշեն կկանչի։

Կնիկն ասեց.— Դուք գացեք, էրկու սհաթից սորա կճամբեմ, կիգա։

Խըլայուգներ օր թողին գացին, ախչիկն է, հ՝ելավ, ճամբեց զչորան բաղնեկ, համամլամիշ էրեց, թրաշ էրեց ու առավ էկավ։

Բերեց ձեռքըմ աղեկ հալավ հագուց, զառշին էրկու ձեռք լե աղեկ ու ասեց.— Հ՝ելի գնա փաշի դիվան, տես ի՞նչ կասե ու դառցի էկո։

Մեկ լե թանբիհ էրեց. «Կէրթաս, բարև կիտաս, դռան հ՝ետև կնըստիս, խահվա օր կբերին, չփչիս»։

Զորանն հ՝ելավ գնաց, փաշեն տեսավ էդօր լե ուրիշ թավուր հալվըմ էր հագի, փոշիմնավ զուր կանչել։ Բըլե տզի ձեռկեն չկառնա յախա սերմիշ էնե։

Բարև տվեց, նստավ, խահվա բերին, զուր խահվեն խմեց։

Խմեց խըլըսավ, փաշեն ասեց.— Զորան, գինա՞ս զքզիկ հ՝որին իմ կանչի։

Զորանն ասեց.— Ես ի՞նչ գինամ։

Ասեց.—Զքզիկ ճամբեր իմ կանչի, օր էրթաս, զէդա վարդի տեր բերիս։

Ախչիկ իրկան թանբիհ էրեր էր, օր ինչ օր կասին ուրեն, նամ ու ճիմ չէնե, ասե՝ հա ու հ՝ելնի, թորկե իգա։ Ինկ դիներ օր իրկա գլուխ կուզին դուբարա խաղան։

Զորանն ասեց.— Թըղ էղնի։

Հ՝ելավ բարիմնա էղավ, թորկեց էկավ ուր հ՝օղեն, ասեց կնկան.— Չիմ ճոկան, ղիմ կուլապն ու ղիմ հալվըներ բի, ես հագնիմ, կթորկիմ, կէրթամ էդա քաղքեն, հա՞ր հ՝եր ղիս տանե փաշեն ու բերե, օր մը լե տեսար տարավ ու չէկա։

Ախչիկն հերսոտավ, ասեց.— Տնաշեն, ի՞նչ էղավ քզիկ, մեկ լե քու շնակնութեն բռնեց, տարան ղբղիկ՝ փաշեն խոմ չկերավ, արի տեսնամ, ի՞նչ է ասի, սորա գնա։

Բերեց զչոբան նստցուց, հարցուց ասեց.— Փաշեն հ՝որի՞ կանչեց զքզիկ։

Ուր մոտ այան էր, մախսուս կհարցուցներ։

Չոբանն ասեց.— Կանչեց ղիս ասեց. «Կէրթաս զէդա վարդի տեր կբերիս, չբերիս՝ զգլուխդ կզարկիմ»։

Ասեց.— Ջանըմ, արե նստի, մենք լե մարդ ինք, իսնի ավլատ ինք, նստի՝ չէղավ, մթնե՝ հ՝ելի գնա։

Բերեց նստցուց, ասեց.—Տնաշեն, դու էդ խըդար հովվութեն էրեր իս, շան, գիլու հ՝ռաստ էկեր իս, չըս վախեցեր ի, գացիր զվարդ բերիր, չվախեցար, հըմկա վարդի տեր բերելուց կվախենա՞ս։

Ասեց.— Քըզիկ իմալ օր սովրցում, հըմալ կէնիս։ Էդ վարդի տեր հուրնեկ-հրեղեն ախչիկըմ է, յոթ գլխեն դևի կնիկն է։ Յոթ գլխեն դեն է, լուսուն օր կէլնի կէրթա ավուխուշի, կբերե զէդ ախչկա գլուխ կկտրե, ուր տուն լե շինուկ է գետի ական վրեն, ծակըմ կա, կիգա էդ ախչկա արուն կլցվի գետի մեջ։ Օր կլցվի գետի մեջ, կդառնա վարդ, հ՝իրկուն դև օր կդառնա կիգա, դեղըմ կա, կբերե քսե վըր ախչկա վզին, կբերե զգլուխ կդնե տեխ, մեկ լե կէղնի հ՝ավալկու ախչիկ, կէլնի կնստի, ու զուրանց քեֆ կէնին, լուսուն կէլնի մեկ լե էն օյոյիկ, էն օյոյիկ։ Կէլնիս կբռնիս զգետի հ՝երկենկն ու կէրթաս։ Դևն հանդե գացեր է ավճութենի։ Կէրթաս կմտնես դևի տուն։ Կտեսնաս օր ախչիկ մորթուկ է, գլուխ թալուկ մեկ դին, ջանդակ՝ մեկ դին։ Չվախնաս։ Կէլնիս կմտնիս տեղըմ, կպատվըտիս, հ՝իրկուն դև կդառնա կիգա, զդեղ կբերե, կքսե ախչկա վզի վրեն ու կբերե զգլուխ, դնե տեխ։ Կսաղնա, կէլնի կնստի։ Դեղի տեխ աղեկըմ կնշնիս։ Հանդե լուսմութ մեկ լե դև կէլնի, կբերե զախչկա գլուխ կկտրե ու կթորկե, կէրթա սար ավճութենի։ Դու կէլնիս, կբերիս զդեղ կքսիս ախչկա վզի վրեն, կառնիս ու կիգաս։ Հերկ է, զէդա խուլ, զէդա կարգ ու շարգ փոխե, դու լե մարդ էղի, մտի մարդամեջ,—ասեց ախչիկն չոբնին,— ամո՞թ չէ քզիկ, ինչ օր ասին, կդրոդրկիս։

Չոբանն է, ուր չարխներուց, բճերուց ու կուլբից իսկի վազ չի գա։

Հ՝ելավ, հագավ զուր շարուխ ու բուճ, առավ զկուլապ վրեն ու զճամբախ տվեց հ՝առեջ։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց դևի տուն։ Հ՝ելավ դուրս, տեսավ օր

ախչիկը՝, մարդու պիտեր օր թամաշա էներ, գլուխ կտրուկ, թալուկ է հ՝ոդի, գլուխ հ՝ընկուկ է մեկ դին, ջանդակ՝ մեկ դին։ Հ՝ելավ մտավ աշկունքը՝մ, պատվրտավ։

Հ՝իրկուն օր էղավ, տեսավ դև ինչ խրդար ջուն ու ջանավար կա, էձգեր է հ՝առեջ, սար ու ձոր հ՝ենգան օր կփեքա թեթրամիշ կէղնի ու էկավ։

Էկավ, տեսավ օր պատի ծրկեն հանեց մրլհամրմ, բերեց քսեց ախչկա վզի վրեն, զգլուխ դրեց տեխ, ոաղցավ, հ՝ելավ նստավ։

Բերին ինչ ավ ու խուշ օր էրած էր դևն, էփին ու ուրանց քապապ, կերան, գրկվան հ՝իբար ու հար լուս պառկան քնան։

Լուսմութ օր էղավ, հ՝ելավ դև, բերեց ղախչկա գլուխ դրեց էդ ծրկու դեմ, զգլուխ կտրեց, ջանդակ հ՝ընկավ մեկ դին, գլուխ՝ մեկ դին ու թորկեց գնաց։

Ասիմ թե դև հասավ, չհասավ սար, տղեն հ՝ելավ, բերեց զմհլամ, քսեց ախչկա վզի վրեն, բերեց զգլուխ դրեց տեխն, ախչիկ հ՝ելավ նըստավ։ Օր հ՝ելավ նստավ, ասեց.— Հողածին, քու կանաչ արևու բաղդն իմ հ՝ընկի, իմ հալ հ՝ըմնօր էդ է։ Ձիս աղատե էդա անաստվածի ձեռկեն։

Ախչիկն է, հ՝ընկավ տան մեջ, դևին ինչ օր ծանդր բան կեր, աղրութ, զմրութ, օսկի ու արծաթ, ժողվեց հակուբի մը մեջ, տվեց տղի մոտ, տղեն թալեց վըր ուր փեճրն ու հ՝ընկան ճամբախ։

— Կիգի ջուտ էրե խըլըսինք, քանի դև չէկեր է։

Էնդոնք թրդ էրթան ուրանց ճամբու հետ, մենք դառնանք վըր դևին։

Դեն է, հ՝իրկուն դառցավ էկավ, տեսավ օր ախչիկ չկա։ Էսդին զարկվավ, էնդին զարկվավ, ախչիկ չգտավ։ Քըրբեն փաթլամիշ էղավ հ՝իրարուց։

Ջոբանն է, առավ ղախչիկ ու դեմ առավ էկավ տուն։

Օր էկավ տուն, ախչիկ տեսավ չորնի կնիկ, փաթվան հ՝իբար, պագեցին զիրար։ Էն ասեց էնդոր՝ մեծ քուր, դու պզտիկ քուր, ես պզտիկ քուր, դու մեծ քուր ես։

Ջոբանն է, էլ փաշի հ՝ետևան չգնաց։

Ավուրրմ մեկ մեկ լե փաշի տղեն հ՝ելավ օլըրտավ։ Էկավ էդ խան, տեսավ չոբնին հար հ՝էսօր մեկ կնիկ էր, ըստ հազ էղեր է էրկուս. էն կասե՝ ես իմ, էն կասե՝ ես իմ։ Խելք գնաց գլխեն, ուշքաթափ էղավ, հ՝ընկավ գետին, մեռավ։ Դու դինաս, էլ ուշք կառնա՞ն բերին հ՝ինկ։

Գացին, փաշին ասին.—Քու տղի ուշք գացեր է, հ՝ընկեր է չոբնի հ՝օդի դուռ, մեռի։

Ճամբեց մարդ, առավ, էկավ, զպորտ օլըրտին, ջուր լցին մեջքներ, հ՝ելավ կանավ։

Ասեց փաշեն.—Տղա՛ լաո, դու ի՞նչ կասիս, քու հ՚երսով մուր կա, քալքիմ աստված էն մարդուն հըմալ է կամեցի, զոռ՞վ է։

Տղեն ասեց.— Չըմ գինա, էդա հ՚իգամ, էդա էրԹամ ղշոբնի կնկտիկ չոբնի ձեռքեն կառնիմ։

Փաշեն մեկ լե կանչեց զուր մաճլիսներ, առան էկան, բայց կիսատ սրտով բերեց։ Ինքն ուրեն կասեր. «Թերեմ, ի՞նչ ասիմ էդ մարդուն, էդ մարդ լե իմ պես մարդըմ, կարելի է հ՚իսնե դհա բանձր է, իմ տղեն չըմ գինա, գլխե՞լքն է կորցուցի»։

Օր գացին ղշոբան կանչին, ըստհաղ դևի կնիկ հ՚ելավ պատասխան տվեց։ Ասեց.— Դուք գացեք, էրկու սըհաԹ մոֆուլ տվեք, կճամբեմ կիգա։

Խըլայուղներն օր գացին, դևի կնիկն հ՚ելավ, կանչեց զբաղնեպանն էկավ։

Ասեց.— Կառնիք ղշոբան, կէրԹաք բաղնեկ, աղեկըմ համամլամիշ կէնիք, ղէրես կկնդեք։

Ջեռկըմ լե հալավ տվեց, քու տուն շինվի ու քու հալվընեբուն, հ՚ըմեն պաղ սըրծաԹ դետին ղարկեր, փետի պես կկաներ, ասեց.— Չէգա կհագուք, կառնեք կիգաք։

Առան բաղնեպըներ ղշոբան, գացին։ Թամիզըմ համամլամիշ էրին, զմոռուք տվին ցած, հագուցին զուր հալվըներն, առան էկան։

Ասեց կնիկ.—Հ՚ելի գնա տես՝ փաշեն ի՞նչ կասե ու դառցիր էկու։

Չոբանն հ՚ելավ, դեմ քշեց գնաց փաշի դիվան, Թամանգար էղավ ու կանավ։ Փաշեն տեսավ զէդոր հալավն ու քիտպաԹ, ասեց. «Ջանըմ, էդա մարդ լե իմ պես մարդըմ է, ես իմա՞լ էդոր բան Թաքլիֆ էնիմ, վա՛յ տղա, քու հ՚երես սևնա, զմզիկ էրեր իս գեդնով գետին, չընք կառնա մարդու հ՚առաշ խոսա»։

Փաշեն ասեց.— Չոբան, նստի։

Չոբանն Թամանգար էղավ ու ուր տեխ, հ՚ըմնօր հ՚ուր օր կնստեր, նստավ։

Խահվա բերին, զուր խահվեն լե խմեց։ Օր զխահվեն խմեց, խըլը-սավ, փաշենն ասեց.— Չոբան, գինա՞ս զքզիկ հ՚որին իմ կանչի։

Չոբանն ասեց.— Չէ, ի՞նչ գինամ։

Ասեց.—Զքզիկ կանչեր իմ օր հար վաղ հ՚էդա գահ իմ քոշքի պես ձեռքըմ քոշք ու սարայի շինիս իմ տներու դեմ, չշինես՝ զգլուխդ կղարկիմ։

Չոբանն ասեց.— Թըղ էղնի։

Ու հ՚ելավ, Թռրկեց էկավ տուն։ Օր էկավ տուն, ասեց.— Զիմ ղշա-բուխ ու բուճ, կուլապն հազրեք, փախնեմ էրԹամ։

Դևի կնիկն ասեց.— Ջանըմ, էդա օր ցերեկով դու հ՝ու՞ր կէրթաս, էկո նստի, հ՝ելի գիշերանց գնա, իսկի չէ՞, մարդ չտեսնա քզիկ։

Լավելով-տավելով բերին նստցուցին։ Հ՝իրկուն օր էղավ, մեկ լե դևի կնիկն ու Խամուր-բեկի ախչիկն կիշքեն օր հ՝իգեր, ուրանց խեչ պառկեր, մեկ լե քաշեց զկուլապ ուր գլուխ, հ՝երկնցավ գռան հ՝ետև։

Կես գիշեր օր էղավ, դևի կնիկ հ՝ելավ հ՝իմցուց, հանեց մատնեկըմ տվեց։ Ասեց.— Կէլնիս կանես դուռ, զէդա մատնըկի ակ կլիզիս, էրկու արաբ կկանին հ՝առեջդ, չվախենաս։ Կասին՝ շինի՞նք, ավրի՞նք, ի՞նչ կուզիս՝ ասե, տեսնաք։ Ասե՝ նը շինել կուզիմ, նը՝ ավրիլ։ Կուզիմ օր հար լուս քոշք ու սարե մը կանկըցուք փաշի քոշք ու սարի դեմ։ Հըմալ օր մըչ աշխըրքին չէղնի։ Քոշքի հ՝առջև բաղչա, բաղչի մեջ մարմար քարե հավուզ։ Հանտե էնդոնկ կշինեն, կանկըցուն։

Ջորանն սառավ զմատնեկ, հ՝ելավ դուրս։ Ջակ լիզեց, ջուխտըմ արաբ կանան հ՝առեջ, թրեր ձեռք ուրանց։ Ուր տեխ թեթրամիշ էղավ։ Ասին.— Շինե՞նք, ավիրե՞նք։

Ջորանն ասեց.— Նը շինեք, նը ավիրեք։ Կուզիմ ձենե, օր հաբ լուս ձեռքըմ քոշք ու սարա կանկըցուք, հ՝առեջ բաղչա, հազարանց բըլ-բուլ մեջ կանչե, մարմար հավուզ մեկ դին թալե։

Ջորան գնաց պառկավ, քնավ։

Լուսմութվան դեմ փաշեն հ՝ելավ տեսավ օր ուր փանջարեսներու լուս բռնվեր է։ Զգլուխ հանեց դուրս, իշքեց, տեսավ օր ձեռկըմ քոշք ու սարա կա ուր դեմ, ուր քոշք ու սարեն էնդոր փոր կէրթա, իմալ շընակ-ներ ու քոխտրկներ փաշի տան հ՝առեջ, ուր քոշք ու սարեն լե հըմալ է էդ քոշք ու սարի հ՝առեջ, պաղ բերնավ, մնաց։

Հ՝ելան լուսմութ։ Ջորանն ըստ հաղ ձեռկըմ ուրիշ չեշիտ հալավ հագավ, դեմ քշեց, գնաց փաշի դիվան։ Ասեց.—Փաշա, ես էկեր իմ զքզիկ ու քու մարդիկ գավաթ կէնիմ, վաղ ինչ խըդար քզիկ մարդ կա՝ փաշա, բոշա կժողվիս կիգաս իմ տուն, քիչըմ քեֆ-ուրախութեն էնիք։

Փաշեն ասեց.— Թըղ էղնի։

Հ՝ելան լուսմութ, ինչ խըդար մարդ օր կեր փաշին՝ թե հազար, թե էրկու հազար, ժողվեց, հ՝ելավ գնաց չորնի տուն գավաթ։ Քոշքից ներս օր մտավ, պաղբերնավ, մնաց։ Գացին նստան, զուրանց ջըղարեք քաշին, զխահվեք խմեցին, խըլըսան։

Ախչիկն (դևի կնիկ) կանչեց զչորանն, ասեց.—Կառնիս զէդա մատ-նեկ, կէլնիս կանիս դուռ, կշըփիս, շուխտըմ արաբ թրեր ձեռք ուրանց կկանին հ՝առեջդ, չի վախենաս։ Կասին՝ շինի՞նք, ավի՞րենք։ Դու կասես՝ նը շինեք, նը ավիրեք, ձենե կուզիմ զէդա քոշք ու սարային ուր միշու մարգերով, մենակ զիմ կնկտիք կհանեք միջեն, հըմալ կավըրկիք օր մեկ ասե՝ էղեր է, տաս ասե՝ չէղեր է։

Տղեն հ՝ելավ, առավ ղմատնեկ ու հ՝ելավ կանավ դուռ, զակ լիզեց։ Ջուխտըմ արաբ, թրեր ձեռկ ուրանց, կանան հ՝առեջ։

Ջորանն ինչ օր զուտի կդողեր։

Արրըներ ասին.— Շինի՞նք, ավի՞րենք։

Ջորանն ասեց.— Նը շինեք, նը ավիրեք։ Ձենե կուզիմ օր զէդա քոշք, ուր միշու մարդերով, մինակ զիմ կնկտիկ կհանեք միշեն, հմալ կավիրեք, օր մեկ ասե՝ էղեր է, տաս ասե՝ չէղեր է։

Էրկու արաբ լե թամանա էղան, հ՝ելան դուրս։ Հըմալ էրին զքոշքն օր տեխ լե չէրևեր։

Նոր չորնի յախեն աղատավ փաշի ձեռքեն ու փաշի տղին, առավ զուր կնկտիք, էղավ չորան-փաշա, նստավ։

Յոթն օր դոլ ու զուռնեն իսկի չկանավ, զարկին ու խաղցան, քեֆ ու ուրախութեն էրին։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։

Աստծուց հ՝իշավ իրեկ խնձոր։ Մեկ՝ ասողին, մեկ լսողին, մեկ լե անկաճ էնողին։